

# Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19) և Քրոնիկական լիմֆոլեյկոզով (ՔԼԼ/CLL) հիվանդներ

**CLL Advocates Network-ի հայտարարությունը.**

10 Ապրիլ 2020 (2-րդ տարբերակ - թարմացվել է գործող ցուցումներից ելնելով)

[CLL Advocates Network](#)-ը ուշադիր հետևում է տարբեր երկրներում իրականացվող միջոցառումներին՝ COVID-19 վիրուսը կառավարելու համար: Տեղեկությունների մեծ մասը COVID-19-ի մասին չի անդրադառնում քրոնիկ լիմֆոլեյկոզով (CLL) հիվանդներին: Այս հայտարարությամբ մենք ցանկանում ենք լրացնել այդ բացը և լրացուցիչ խորհուրդներ հաղորդել CLL հիվանդների վարման համար:


Աղբյուրներից շատերը հաղորդում են, որ հետևյալ անձինք գտնվում են COVID-19ի ծանր տեսակով հիվանդացության բարձր ռիսկի խմբում.

- Մեծահասակներ (60+ տարեկան):
- Մարդիկ, ովքեր ունեն ուղեկցող քրոնիկական հիվանդություններ (օրինակ. թոքերի կամ սրտի քրոնիկական հիվանդություններ)
- Երկրորդային ինֆեկցիաներով վարակվածներ:

Հետևյալները ծանր COVID-19-ի հիվանդացության ավելի բարձր ռիսկի տակ են.

- իմունային համակարգի անբավարարություն ունեցող հիվանդներ:


CLL հիվանդները՝ անկախ նրանից բուժում ստացել են թե ոչ, անկախ տարիքից, իմունային անբավարարություն ունեցող հիվանդներ են: Բուժումը կարող է էլ ավելի խորացնել իմունային համակարգի ընկճվածությունը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ CLL հիվանդները COVID-19ով վարակվելու և ավելի ծանր ախտանիշներ ունենալու մեծ ռիսկի տակ են՝ քան ընդհանուր ազգաբնակչությունը:



Քանի որ COVID-19-ի համար հատուկ հակավիրուսային դեղամիջոցներ կամ պատվաստանյութեր դեռևս չկան, խորհուրդ է տրվում խստորեն պահպանել համաճարակաբանական միջոցառումները և նվազեցնել վարակելիության ռիսկը: Ինչպես գիտեք COVID-19-ը տարածվում է հիմնականում մարդուց մարդ՝ հազի, փռոցի կամ ձեռքի շփման միջոցով: Ստորև նշված են ընդունված կանոնները, որոնք պետք է հետևեն բոլոր քաղաքացիները՝ երիտասարդ թե՛ ծեր, առողջ թե՛ հիվանդ.

1. Խուսափեք սերտ շփումից (հեռավորությունը պահպանեք նվազագույնը 1,5 մետր, իդեալականորեն 2 մետր):
2. Ձերձ մնացեք ձեռք սեղմումներից, գրկախառնություններից և համբուրվելուց (ողջույնի ժամանակ): Առաջ անցեք մարդկանցից հազի կամ փռոցի պահին:
3. Խուսափեք ձեր դեմքին (աչքերին, քթին կամ բերանին) դիպչել ձեռքերով:
4. Ձեռքերը լվացեք օձառով և ջրով հաճախ: Առնվազն 60% ակոհոլ պարունակող ձեռքերը մաքրող միջոցները նույնպես կիրառելի են, սակայն քիչ նախընտրելի:
5. Խստորեն հետևեք սոցիալական հեռավորությանը վերաբերվող գործող միջոցառումներին:
6. Փռոցը և հազը փորձեք ուղղել դեպի արմընկային հողի շրջան: Քթից արտադրության դեպքում օգտագործեք միանգամյա օգտագործման անձեռոցիկներ և հնարավորինս շուտ դեն նետեք այն:
7. Խուսափեք ճանապարհորդելուց:
8. Հնարավորության դեպքում աշխատեք տնից:

CLL հիվանդներին կոչ է արվում լինել չափազանց զգույշ և խստորեն հետևել սահմանափակումներին, որոնք առաջարկվում են իրենց համապատասխան երկրների առողջապահական մարմինների կողմից: Մեծ Բրիտանիան խստորեն կոչ է անում լուրջ առողջական խնդիրներ ունեցողներին (ներառված են նաև «մարդիկ, ովքեր ունեն արյան կամ ոսկրածուծի չարորակ հիվանդություններ, ինչպիսին է լեյկոզը») տանը մնալ առաջիկա 12 շաբաթների ընթացքում՝ սկսած մարտի 21-ից և զերձ մնալ ընդհանուր ազգաբնակչության հետ շփվելուց:




**Կլինիկական պրակտիկայի փոփոխություններ, որոնք ազդում են ՔԼԼ-ով հիվանդների վրա**

Ինչ վերաբերում է այն հարցին, արդյոք քաղցկեղ ունեցող հիվանդները պետք է հետաձգեն կամ շարունակեն իրենց բուժումը, Արյունաբանության և ուռուցքաբանության գերմանական կազմակերպությունը (DGHO) նկատում է, որ քաղցկեղի արդյունավետ բուժումը հիվանդի համար ավելի կարևոր է, քան նոր կորոնավիրուսի դեմ նման կանխարգելիչ միջոցները՝ որպես բուժման ընդհատում կամ բուժման հետաձգում: Այն հիվանդները, որոնց հիվանդությունը վերահսկվում է սպեցիֆիկ թերապիայի միջոցով, սովորաբար առկա վարակների դեմ պայքարի արդյունավետությունը ավելի բարձր է, քան այն քաղցկեղ ունեցող հիվանդներինը, որոնք բուժվում չեն ստանում: Հետևաբար սուր քաղցկեղային հիվանդություն ունեցողների մեծ մասի համար, համապատասխան և ծրագրավորված թերապիայի կատարման առավելությունը՝ գերազանցում է ռիսկը հնարավոր կորոնավիրուսային հիվանդության կանխարգելմամբ պայմանավորված՝ բուժման հետաձգմանը: Կախված անհատական իրավիճակից, խորհուրդ է տրվում մշտապես հաղորդակցվել Ձեր արյունաբանի հետ, բուժական լավագույն ճանապարհը ընտրելու նպատակով:

**ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՈՒՆԵՔ COVID-19- ի ՀԵՏ ՇՓՈՒՄ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՆՏԱՆԻՇՆԵՐ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է COVID-19**

1. Եթե ունեք ախտանիշեր, որոնք համատեղելի են COVID-19 հետ կամ ունեցել եք անմիջական շփում հաստատված COVID-19ով վարակակրի հետ՝ հետևեք ձեր երկրի ընթացակարգին (Զանգահարեք առողջապահության նախարարության Թեժ գիծ):
2. Տեղեկացրեք ձեր արյունաբանին / ուռուցքաբանին հեռախոսով կամ էլ.փոստով (մի գնացեք հիվանդանոց ինքնուրույն, բուժաշխատողներին և այլ հոսպիտալացված հիվանդներին հնարավոր վարակից պաշտպանելու նպատակով):
3. Մի դադարեցրեք ձեր բուժումը, քանի դեռ ձեր արյունաբան/ուռուցքաբանը ձեզ չի ասել: Ձեր արյունաբանը պետք է կապ հաստատի այն թիմի հետ, որը հոգ է տանում ձեր մասին (այն դեպքում երբ ունեք հաստատված COVID-19) հնարավոր նեղ մասնագիտական ճշգրտումներ կատարելու համար:

**Չնայած մեկուսացմանը, ԴՈՒՔ ՄԵՆԱԿ ԶԵՔ**



Մնացեք կապի մեջ ընտանիքի և ընկերների հետ հեռախոսով կամ անցանց:  
Հնարավոր է, որ քիմիոթերապիայի ցիկլերի ընթացքում դուք ունեցել եք  
մեկուսացման զգացողություն: Արտաքին աշխարհից կտրված լինելը, անշուշտ,  
մարտահրավեր է, բայց

դուք ունեցել եք նախկինում այդ փորձը, և այս մեկը ևս հաղթահարելու եք: Երևի սա  
լավ ժամանակն է քաջություն և ուժ հաղորդել նրանց, ովքեր չունեն այդ փորձը:

### **ՏԵՂԵԿԱՑԻ ԵՎ ՕԳՆԻՐ ՏԵՂԵԿԱՑՎԵԼՈՒՆ**

Նորությունները և խորհուրդները փոխվում են շատ արագ, այդ պատճառով  
հետևեք հեղինակավոր աղբյուրների թարմացումներին:

Հետագա տեղեկությունների համար, որոնք առչվում են COVID-19-ին, հետևեք  
ստորև ներկայացված աղբյուրներին

**ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՕԳՆԵԼ ՄԵԶ**

Տեղեկացրեք իմունիտետի ընկճմամբ հիվանդներին համար COVID-19-ի ռիսկերի  
մասին

Բարձրացրեք տեղեկացվածությունը լոկալ կառավարության և  
առողջապահության ոլորտի պատասխանատուների համար

- Հիշեցրեք լոկալ առողջապահական քաղաքականության  
պատասխանատուներին, որոշումներ կայացնողներին և այլ շահագրգիռ անձանց,  
թե ինչպիսի բարձր ռիսկեր ունեն արյան չարորակությամբ հիվանդներ ունեղոց  
անձիք


- Համոզվեք, որ ձեր տեղական իշխանությունները և շահագրգիռ այլ անձինք  
տեղյակ են, որ այս վարակը վտանգավոր է ոչ միայն տարեց բնակչության, այլև  
ավելի երիտասարդ մարդկանց համար

- Կիսվեք լավագույն փորձով:

Նշեք մեզ Twitter- ում կամ Facebook- ում: Եվ ամենակարևորը՝ ապահով եղեք:

Ձեր CLL Advocates Network թիմ

Կապվեք մեզ հետ [info@clladvocates.net](mailto:info@clladvocates.net)



## Աղբյուրներ.

World Health Organization (WHO) <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/advice-for-public>

Public Health England

<https://www.gov.uk/government/publications/covid-19-guidance-on-social-distancing-and-for-vulnerable-people/guidance-on-social-distancing-for-everyone-in-the-uk-and-protecting-older-people-and-vulnerable-adults>

US Center for Disease Control

<https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/specific-groups/high-risk-complications.html>

Government of Canada

<https://www.canada.ca/en/public-health/services/publications/diseases-conditions/vulnerable-populations-covid-19.html>

German DGHO (German Society of Haematology and Oncology)

<https://www.dgho.de/aktuelles/news/news/2020/coronavirus-covid-19-bei-krebspatienten>

## CLL specific sites:

American Society of Hematology (ASH)

<https://www.hematology.org/covid-19/covid-19-and-cll>

CLL Support Association

<https://www.clisupport.org.uk/coronavirus/>

CLL Society

<https://cllsociety.org/covid-19/>

UK CLL Forum

<http://www.ukcllforum.org/>

[https://ukcllforum.org/wp-content/uploads/2020/04/UKCLL\\_COVID19\\_practical\\_b.pdf](https://ukcllforum.org/wp-content/uploads/2020/04/UKCLL_COVID19_practical_b.pdf)

Onkopedia (a guideline portal for practising doctors in Germany, see 6.2.13 Chronische Lymphatische Leukämie (CLL))

<https://www.onkopedia.com/de/onkopedia/guidelines/coronavirus-infektion-covid-19-bei-patienten-mit-blut-und-krebserkrankungen/@@guideline/html/index.html>

## Other cancer sites:

Bloodwise

<https://bloodwise.org.uk/blog/coronavirus-and-blood-cancer>

One Cancer Voice

[https://bloodwise.org.uk/sites/default/files/documents/one\\_cancer\\_voice\\_advice\\_on\\_coronavirus\\_for\\_people\\_with\\_cancer.pdf](https://bloodwise.org.uk/sites/default/files/documents/one_cancer_voice_advice_on_coronavirus_for_people_with_cancer.pdf)

Թարգմանվել է YOUNG AHA TEAM ի կողմից: